

ԹԻՎ 13 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

«17» նոյեմբերի 2022թ.

ք.Արարատ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N18

**ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԴԱԴԱՐԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ՄԱՆԴԱՏԸ «ԻՄ ՀՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ»**

**ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻ
ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՋՈՐԴ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Վեղի համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի «10»-ի N3409 գրությունը, Վեղի համայնքի ավագանու 2022թ նոյեմբերի 4-ի N 179-Ա որոշումը « Վեղի համայնքի ավագանու անդամ Հասմիկ Վազգենի Գևորգյանի ` ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու մասին» և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 8-րդ մասով` թիվ 13 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Մ Է .

Վեղի համայնքի ավագանու «Իմ Հզոր Համայնք» կուսակցության ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվում է «Իմ Հզոր Համայնք» կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Վահագն Ռաֆիկի Վարդանյանին:

Հանձնաժողովի նախագահ՝

Հ.Գասպարյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Գ.Գալստյան

Անդամներ՝

Ս.Մուրադյան

Ա.Փամբուկյան

Ն. Գալստյան

Լ.Դալլաքյան